Մտերիմ ընկերներիցս մեկին.

Ողջու՛յն, իմ սիրելի՛ ընկեր,

Մենք երբեք չենք հանդիպել ու չենք խոսել, բայց կարծում եմ՝ մենք ընկերներ ենք: Ինչպե՞ս ես: Կարծում եմ՝ քեզ հետ ամեն ինչ լավ է: Ես կիսում եմ քո մտքերն ու մտածելակերպը: Կարծես՝ մենք մոտ ընկերներ ենք նույն երկնքի տակ, բայց միևնույն ժամանակ շատ հեռու: Այսօր քնելիս ես երազանք կպահեմ: Դա կլինի մեր գաղտնիքը, այն է՝ մի օր տեսնել քեզ: Ես շատ բան ունեմ քեզ պատմելու, քեզ հետ զրուցելու:

Ես Սյուզաննան եմ Գավառից՝ մի շատ փոքրիկ քաղաք Հայաստանում: Ես ուսանող եմ և ցանկանում եմ հայտնի դեսպան դառնալ: Ես սիրում եմ լողալ, և ընկերներս ինձ լողորդ Սյուզան են անվանում: Ես օր ու գիշեր քո նամակի մասին եմ մտածում և ուզում եմ իմ մասին քեզ պատմել ամեն բան և ճանաչել քեզ:

Տատիկս ինձ պատմել է մեր երկու ազգերի նմանությունների մասին: Նա ինձ պատմել է, որ մեր երգերը, երաժշտությունը, պարը և նույնիսկ ճաշատեսակներն են շատ նման... ուրեմն ինչպե՞ս կարող ենք մենք թշնամիներ լինել:

Մենք բարեկամներ ենք եղել և բարեկամներ կմնանք անգամ եթե մեր միջև տարաձայնություններ կան: Բայց հավատա՝ կգա մի օր, երբ ես կկարողանամ տեսնել քեզ, դու էլ՝ ինձ, մենք սեղանի շուրջ կնստենք և կզրուցենք: Ես քեզ համար կերակուր կպատրաստեմ, իսկ դու կփորձես այն: Հույս ունեմ, որ ես լավ խոհարար եմ, հահա... կատակ էր: Արի՛ մի կողմ թողնենք ամեն բան և լավ ընկերներ լինենք՝ ողջ տխրությունն ու արցունքները թողնելով անցյալում: Հրաշալի ապագա եմ մաղթում բոլորիս:

Լավագույն մաղթանքներով՝

Սյուզաննա